

ԱՍ ՄԼՍՅԱԿԱՆՅԱՆ

ՊՈՒՇԿԻՆԻ „ՈՍԿԵ ԶԿՆԻԿ“-Ի ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

19-րդ դարի առաջին կեսերին հեղաշրջում մտավ ոչ միայն մեր ինքնուրույն գեղարվեստական գրականության բնագավառը, այլև թարգմանական գրականության պատմության մեջ: Դա մի առողջ և կենսաթաթափ հոսանք էր, որ դալիս էր հատկապես ռուսական առաջավոր գրականությունից: Այդ նոր հոսանքն սկսվում էր ռուս խոշորագույն բանաստեղծների՝ Կրիլովի, Խեմնիցերի, Փուկովսկու, Պուշկինի, Լեռմոնտովի, Բարատինսկու, Գնեդիչի և այլոց գործերի թարգմանությամբ: Սկզբնական շրջանում մասնավորապես Կրիլովի առակներն էն, որ անհատական-հասարակական հետաքրքրության սահմաններից դուրս, դառնում են նաև թարգմանական արվեստի փորձնական մատերիալ՝ հայկական ուսումնական հաստատություններում: Շատ շանցած, հայ թարգմանիչների հայացքը կանգ է առնում ռուս ժողովրդի մեծագույն պավակի՝ Ա. Ս. Պուշկինի վրա: Թե ինչպիսի տեղ է գրավում Պուշկինը՝ հենց սկզբից՝ մեր թարգմանական աշխարհում, պարզ երևում է 1843 թվին Մոսկվայում լույս տեսած մի ժողովածուից, ուր զետեղված ռուս 5 հեղինակների 19 բանաստեղծությունների թարգմանություններից 10-ը՝ Պուշկինին էին (թարգմանիչ Համազասպյան): Այդ հրատարակության թարգմանական միակ զլխավոր թերությունն այն էր, որ կատարված էր գրաբարով: Այնուհետև հայ թարգմանիչներն առանձին ուշադրություն են նվիրում Պուշկինի «Сказка о рыбаке и рыбке» հեթաթին, ստեղծելով բավական ուշագրավ մի պատմություն:

Այդ հեթաթին առաջին անգամ թարգմանում է դանձակեցի Հովհաննես Բաղդասարյանը 1858 թվի ապրիլին և նույն թվին էլ տպագրում: Դա ոչ միայն «ազատ թարգմանություն» է, այլ և արձակ: Ահա այդ թարգմանության սկիզբը.

«Մի ծեր մարդ իր պառաւ կնոջ հետ կենում էր մեկ հասարակ շողե տան՝ կապոյտ ծովի մօտ ամբողջ երեսուն և երեք տարի. ծերն ձկնորսութեամբ էր պարապում և պառաւն էլ թել էր մանում...»:

Այս թարգմանության ամենազլխավոր թերությունն այն էր, որ կատարված էր արձակ, մինչ բնագիրը չափածո էր: Ահա այս թերությունն ուղղելու է դալիս մի ուրիշ թարգմանիչ և 5 տարի հետո, 1863 թվին, նույն «Մեղու Հայաստանին» տպագրում է այդ նոր չափածո թարգմանությունը: Սակայն այս թարգմանությունն էլ իր մի առանձնահատկությամբ զիջում է առաջին թարգմանությանը և դարձյալ մնում պակասավոր: Խոսքը լեզվի մասին է: Սին առաջին թարգմանիչը թարգմանել էր ժամանակի գրական (աշխարհաբար) լեզվով, որը մատչելի էր լայն մասսաներին, ապա այս երկրորդ թարգմանությունը կատարված էր Քիֆլիսի հայերի բարբառով: Այս թարգմանության հեղինակն անհայտ է. սակայն դատելով մամուլի էջերում նույն տարիներին

1 «Մեղու Հայաստանի», 1858, № 16, էջ 127—128:

տպագրված նման գործերից — կարելի է ենթադրել, որ թարգմանիչը եղել է Գ. Տ. Աղեքսանդրյանը: Նկատելի է նաև, որ այս թարգմանության ժամանակ թարգմանիչը հատկապես ընդգծել է ձկնորս կնոջ բացասական կողմերը և հարստացրել այն հավելումներով: Որպեսզի ցույց տանք այդ թարգմանության երեք գլխավոր առանձնահատկությունները (թիֆլիսահայոց բարբառ, չափածո, հավելումներ)՝ միանգամից, բերենք մի օրինակ.

«Կնիեր չէր հանում իր մարթուն.

Ծեր էր, ամա չար, անգրեղում.

Մէ օր ի՞նչ է, մէ օր խրխճին

— այսլ թիրայ չէր ստեղծել:

Վաղ կրնգայ յիդ ապրիւր խօմ

Գրծուխկիմէն էլ է ընթարո:

Այս թարգմանությանը հաջորդում է 21-ամյա լուսություն, ապա 1884 թվին միաժամանակ լույս են տեսնում հայ հայտնի հեղինակներ Ղ. Աղայանի և Բ. Քաթիպայի թարգմանություններն՝ առանձին-առանձին: Պարզվում է, որ դրանցից առաջ մի ուրիշ թարգմանիչ թարգմանել է այդ հեքիաթը, որը տպագրվում է 1903 թվին: Այս թարգմանության հեղինակն է ժամանակի ուսուցիչներից մեկը, որ սիրել է նաև բանաստեղծություններ հորինել և թարգմանել: Եվ, ահա, երբ 1903 թվին հրատարակվում է նրա՝ Կամսար Տեր (Կավրյան)՝ «Բանաստեղծություններ» գրքույկը, այդտեղ էլ գետեղվում է քննվող հեքիաթի թարգմանությունը՝ հետևյալ ծանոթությամբ. «Այս հեքիաթը հայերէն լեզվով առաջին անգամ քարգմանել է Կամսար Տէր-Գաւրեանցը»: Որպես թարգմանության թվական ցույց է տրված 1878-ը:

Այստեղ էա մի շուտամնասիրված պատմություն, որը կարևոր է ոչ միայն Պուշկինի գործերի թարգմանության ընթացքն ուսումնասիրելու, այլև հիշված հեղինակների (Ղ. Աղայան, Գ. Քաթիպա, Կ. Տ. Դավթյան) գրական գործունեության հետ կապված որոշ խնդիրներ պարզաբանելու տեսակետից: Համեմատությունները ցույց են տալիս, որ այս երեք թարգմանություններն ունեն այնպիսի առնչություններ, որոնք պատահականության արդյունք չեն. ընդհակառակը, մեղմ ասած, փոխադարձ ազդեցությամբ միայն կարող են բացատրվել: Հարց է առաջանում, ի՞նչպես կարող էր Ղ. Աղայանն ազդվել մի գործից, որը տպվեց իր թարգմանությունից մոտ տաս տարի հետո: Վամ ի՞նչպես կարող էր Կ. Տ.-Դավթյանը 1878 թվին ազդվել 1884 թվին թարգմանվելիք օրինակից: Նույնը կարելի է հարցնել նաև Գ. Քաթիպայի առնչությանը:

Ահա իրենի այս դրությունը պարզելու, ինչպես նաև Պուշկինի հիշված հեքիաթի պատմությունը լրիվ ուսումնասիրելու տեսակետից մի առանձին արժեք է ստանում վերջերս մեր Մատենադարանում հայտարարված այդ հեքիաթի մի այլ թարգմանության՝ մինչև այժմ անծանոթ մնացած մի ձեռագիրը: Ինչպես կապացուցենք ստորև, այս նորահայտ թարգմանությունը կատարված է 1-ին և 2-րդ թարգմանություններից հետո և 3-րդ, 4-րդ, 5-րդ թարգմանություններից առաջ:

Այսպիսով, Պուշկինի «Сказка о рыбаке и рыбке» գործի թարգմանական պատկերը՝ մեր գրականության մեջ՝ հետևյալ ձևն է ընդունում.

1. Հովհաննես Բաղդասարյան Գանձակեցի 1858 թ.

2. (Գևորգ Տեր-Աղեքսանդրյան) 1863 թ.

3. Անհայտ հեղինակ (նորահայտ թարգմանություն) ?

4. Կամսար Տեր-Դավթյան 1878 թ.

5. Ղազարոս Աղայան 1884 թ.

6. Գամառ Քաթիպա 1884 թ.:

Նորահայտ թարգմանությունը գտնվում է № 8724 ձեռագրում: Այդ ձեռագիրն ամփոփում է միջնադարյան մի շարք տարածված պատմություններ (Պղնձե քաղաք, Փահլուլ թագավոր, Պատմություն մանկան և աղջկան, Նուշիրվանի և Խիկարի խրատներ և այլն) և մի քանի առակներ՝ արևմտահայ բարբառով: Ժողովածուն զուրկ է գրչության վայրի, ժամանակի, կազմողի և այլ նման կարևոր տվյալներից: Չի նշված ոչ միայն մեզ հետաքրքրող հեքիաթի թարգմանչի անունը, այլև չի նշված, որ դա թարգմանություն է: Սակայն մի շարք հանգամանքներ թույլ են տալիս պնդելու, որ այդ թարգմանությունը, ըստ ժամանակի, երրորդն է (ինչպես ասացինք վերևում):

Այսպես

ա) Կերոհիշյալ բոլոր թարգմանություններն ըստ իրենց խորագրերի բաժանվում են 2 խմբի.

1-ին խումբ

1. Հովհ. Բաղդասարյան «Ձուկն եւ ձկնորս»:

2. (Գ. Տ. Աղեքսանդրյան) «Ձրգնուրսի կնիկը»:

3. Անհայտ հեղինակ (նորահայտ) «Ձկնորս և ձկնիկ»:

2-րդ խումբ

1. Կ. Տ. Դավթյան — «Ոսկե ձկնիկ»:

2. Ղ. Աղայան — «Ոսկե ձկնիկ»:

3. Գ. Քաթիպա — «Ոսկե ձկնիկ»:

Հենց այս պատկերը ցույց է տալիս, որ առաջին խմբի թարգմանիչները դեռ որոնում էին հարմար խորագիր և չհեռանալով հեղինակային խորագրից, պտտվում էին նրա շուրջը: Իսկ երկրորդ խումբը ցույց է տալիս այդ որոնումների հաջորդ էտապը, երբ արդեն գտնված է ամենալավ թարգմանական խորագիրը և բոլորն էլ նույն խորագիրն են ընդունում:

Նորահայտ թարգմանությունն այս տեսակետից պատկանում է առաջին խմբին, ուստի և կատարված է 2-րդ խմբից առաջ:

բ) Թարգմանություններն իրարից տարբերվում և դարձյալ նույն 2 խմբին են բաժանվում ըստ ենթարժանումների (գլխավորումների):

Առաջին խմբի առաջին և երկրորդ թարգմանիչները զանց են առել այս հանգամանքը և մասերի չեն բաժանել: Երկրորդ խմբի բոլոր ներկայացուցիչներն էլ անխտիր կերպով այն բաժանել են նույնաքանակ (7) մասերի: Նորահայտ թարգմանության մեջ մասերի բաժանման երկույթը կա, բայց՝ պրոմիտիվ, այն բաժանված է 12 մասի: Իր մասերի բաժանված լինելով այս օրինակը առաջին խմբում բռնում է վերջին տեղը որպես համեմատաբար կատարյալ թարգմանություն: Իսկ երկրորդ խմբի նկատմամբ այն պրիմիտիվ է, որ կա միայն մասերի բաժանելու անճիշտ փորձը:

գ) Համեմատելով իրար հետ, տեսնում ենք, որ նորահայտ օրինակը փոխ է առել մի քանի պրիմիտիվ դարձվածքներ 1-ին թարգմանությունից՝ օրինակ՝ Հովհ. Բաղդասարյանը թարգմանել է «զնա քո բանը», նորահայտ թարգմանության մեջ դրան համապատասխան կարդում ենք «զընայ ք»:

1 Մենք չենք փորձելու ապացուցել, որ այս նորահայտ օրինակը չի կարող ավելի հին լինել, քան 1-ին և 2-րդ թարգմանությունները, որովհետեւ դա անստորկելի է:

թանր: Սա մեխանիկական փոխանցում է նախորդից՝ հաջորդին, որը չի նկատվում և չէր կարող նկատվել հետագայի թարգմանիչների մոտ: Ռիշտ նույնը կարելի է ասել նաև Հ. Բաղդասարյանի «Ձեռներին ոսկի մատանին» դարձվածքի մասին, որը նորահայտ օրինակին է անցել «Ձեռների վերայ ոսկեա մատանի» ձևով: Խոսքն այստեղ ձեռների մասին է: Սխալ է ասել, թե մատանիները ձեռքերի վրա էին: Այսպիսի սխալը կգործածեր միայն առաջին թարգմանությունը ծանոթ հեղինակը: Երկրորդ խմբի հեղինակներին և ոչ մեկը նման օրինակներ չունի:

դ) Նորահայտ օրինակը ոչ մի փոխառություն չունի Աղայանի և Քաթիպայի՝ թարգմանություններից: Եթե շրանցից հետո կատարված լիներ, անսլայման որոշ հետքեր կգտնվեին:

ե) Լեզվի և այլ առանձնահատկությունների տեսակետից էլ նորահայտ թարգմանությունը համեմատաբար վաղ շրջանի հմուտ հեղինակի գործ է:

զ) Վերջապես նորահայտ թարգմանությունը պարունակող ձեռագրի պալեոգրաֆիկ տվյալներն ու բովանդակած նյութերը ցույց են տալիս, որ այդ ձեռագիրը պատկանում է 1870-ական թվականներից ոչ ուշ ժամանակաշրջանի:

Ահա այս բոլոր տվյալներին հենվելով համոզվում ենք, որ նորահայտ թարգմանության ժամանակն ընկած է 1863—1878 թվերի միջև և այդ թարգմանությունը, ժամանակի իմաստով, երրորդն է մինչև այժմ հայտնի բոլոր թարգմանությունների շարքում:

Այժմ տեսնենք այս նորահայտ թարգմանության արժանիքները և առանձնահատկությունները.

1) Այս թարգմանությունը ցույց է տալիս, որ հայ հասարակության ուշադրությունից «նսկե ձկնիկը» և նրա սիրելի հեղինակը երբեք չեն հեռացել, և այն 21-ամյա լուծությունը, որ նկատվել է առերևույթ— ճիշտ չէ: Այդ լուծությունը խզված է եղել մեկ՝ 1878 թվին՝ Կ. Տ. Դավթյանի թարգմանությամբ, մեկ էլ դրանից առաջ՝ այս նորահայտ թարգմանությամբ:

2) Ինչպես տեսանք, I և II թարգմանություններն ունենին կարևոր թերություններ (առաջինն աբձակ էր, երկրորդը՝ բարբառով), այդ թերությունները հալթահարված են այս նորահայտ թարգմանությամբ, որը կատարված է կանոնավոր շափածոյով և ժամանակի գրական լեզվով: Դրանից առաջ Պուշկինի որևէ երկի նման, իր ժամանակի համար լրիվ թարգմանություն, չգիտենք: Ուստի նվաճում էր մեր գրականության համար:

3) Առանձին ուշադրության արժանի է թարգմանության շափը: Պուշկինի մոտ այդ հեքիաթի տողերը բաղկացած են 9 կամ 10 վանկերից: Առաջին թարգմանիչն այդ հոգսից ազատ է եղել, որովհետև նա թարգմանել է արձակ: 2-րդ թարգմանիչը թարգմանել է 8 վանկանի տողերով և որոշ շափով հեռացել բնագրից: Նորահայտ թարգմանությունը կատարված է 10 վանկանի տողերով (5—5), սա հիմնականում ներդաշնակ էր արդեն բնագրի շափին: Ուստի և՛ մի նոր նվաճում: Բայց առավել ուշագրավն այն է, որ այդպես են թարգմանում նաև հաջորդ բոլոր հեղինակները: Այսպիսով, այս թարգմանության անհայտ հեղինակի շնորհիվ գտնվում է այդ հեքիաթի թարգմանական շափը և ստանում քաղաքացիական իրավունք նաև հաջորդ տարիների հա-

Կ. Տ. Դավթյանի մասին չենք գրում, որովհետև դրա մասին խոսելու ենք ստորև:

մար: Եթե մեկն այսօր անգամ փորձի թարգմանել այն, դժվար թե փնտոի մի այլ շափ:

4) Բնադրին հարազատ մնալու տեսակետից ևս այս թարգմանությունն արժանի է ուշադրության: Ինչպես տեսանք, երկրորդ թարգմանիչը հավելումների կարգով առանձնապես ընդգծել էր կնոջ շարունակը և դրանով հեռացել բնագրից: Սույն թարգմանության մեջ սկստվում է բացասական վերաբերմունք դեպի այդպիսի միջամտությունը: Ավելին. բնագրին հարազատ մնալու տեսակետից այն կարող է մրցել ոչ միայն նախորդ, այլև հաջորդ թարգմանությունների հետ, շահելով առաջնություն: Վերցնենք խորագիրը. բոլոր խորագրերից («Ձուկն եւ ձկնորս», «Ձրգնուրսի կընիկը», «Ոսկե ձկնիկ») միայն այս թարգմանության խորագիրն է («Ձկնորս և ձկնիկ» ամենից մոտ իսկականին («Сказка о рыбаке и рыбке»)): Այս է ապացուցում նաև տողաբանակը: Պուշկինի մոտ հեքիաթը բաղկացած է 205 տողից, 1-ին թարգմանչի մոտ՝ արձակ է և միտք չունի ի նկատի առնել: 2-րդի մոտ տողաբանակն է 273, Աղայանի մոտ՝ 301, Քաթիպայի մոտ՝ 220, Կ. Տ. Դավթյանի մոտ՝ 222 և նորահայտ օրինակում՝ 218: Այսպիսով, ամենաքիչ շեղումը (13 տող) պատկանում է նորահայտին: Ընդգծելով այս մոմենտը, չենք ցանկանում գնահատել թարգմանությունների արժանիքներն ընդհանրապես, որովհետև նրանց արժանիքները դրանով չեն սահմանափակվում:¹

5) Նորահայտ թարգմանության հեղինակը ստեղծել է թարգմանական մի ուսնի գյուտեր, որոնք անցել են նաև հաջորդ թարգմանությունների մեջ:

Այսպես, օրինակ, Պուշկինը գրել է.

«Впредь тебе, невежа, наука:
Не садися не в свои сани!»

Դրանք նորահայտ օրինակում թարգմանված են հայ ընթերցողին ավելի հասկանալի հետևյալ տողերով.

Արժանի ես, սար, այդ բեզ մի խրատ,
Զր համարձակվիս ցանել կրտաւատ:

Այս կտավհատի օրինակը ոչ բնագրից է գալիս և ոչ էլ 1-ին, 2-րդ թարգմանություններից. սա նոր է և, հետաքրքրական է, որ անցնում է նաև հաջորդներին. այսպես՝ Կ. Աղայանը թարգմանել է.

«Թող այդ բեզ համար լինի լաւ խրատ,
Որ էլ շղանես մանդր կտավհատ:

Ընդհատ նման տողերով է թարգմանել նաև Կ. Տ. Դավթյանը.

«Թող այս բեւ լինի նոր դաս և խրատ,
Որ շյանդանես ցանել կտաւատ:

Պատկանյանի մոտ միանգամայն այլ է.

«Օխ, յիմար, ասաց, միշտ խելք սորվեյիր
Ու միւս անգամ պատիւըդ գիտցիր»:

Նման օրինակներից է նաև հեքիաթի սկզբի տողը: Պուշկինի մոտ կարդում ենք.

«Жил старик со своею старухой»

¹ Օրինակ — Աղայանը փոխադրել է այնքան վարպետորեն, որ այն մինչև որս էլ ձուռն է հավասարը շունեցող:

Նորահայտ թարգմանություն մեջ՝

«Մի ծերունի մարդ և իր պառաւ կին»:

Ծիշտ այդպէս՝ նաև Դավթյանի մոտ:
Մոտավորապես այդպէս է նաև Աղայանի մոտ.

«Մի ծերուկ ձկնորս և իր պառավ կին»:

Բերենք մի օրինակ ևս: Պուշկինի մոտ գրված է.

«Не пойдешь, поведут поневоле»

Նորահայտում՝ «Քի չէ կտանեն վզիդ խփելովս:
Աղայանի մոտ՝ «Սրանք կտանեն՝ վզիդ խփելով»:

Կ. Տ. Դավթյանի մոտ՝ ինչպէս նորահայտում: Սակայն այդպէս չեն մյուս թարգմանությունները և դա բնական է, որովհետև «վզիդ խփելով»-ը չկա բնացրում. դա գալիս է նորահայտից:

Սրանք են նորահայտ թարգմանության գլխավոր արժանիքներն ու առանձնահատկությունները:

Այժմ կանգ առնենք մի ուրիշ կարևոր հանդամանքի վրա: Ինչպէս տեսրանք վերջին օրինակներից, անժխտելի կապ կա նորահայտ թարգմանության և Աղայանի ու Դավթյանի թարգմանությունների միջև: Դեռ սկզբից էլ նշել ենք, որ այդ կապը կա նաև Դ. Քաթիպայի թարգմանության ու այդ գործերի միջև: Եթե առանց նորահայտ օրինակի չէր կարելի վերջնական եզրակացություն գալ, ապա այդ օրինակի միջոցով այժմ հնարավոր է լուծել նշված խնդիրը: Եւ էլ նորահայտ օրինակի մի ուրիշ արժանիքն է՝ մեր գրականագիտության համար: Երբ համեմատում ենք նորահայտ և Աղայան օրինակները, ապա շատ քիչ են առնչվում (համարյա միայն այնքանով, որ ցույց տվինք նորահայտի արժանիքների վերջին (5-րդ կետում): Համեմատելով նորահայտ Դավթյան օրինակները, նկատում ենք խիստ մոտիկ և անմիջական առնչություններ: Նույնիսկ բազմաթիվ տողեր համարյա նույնությամբ կրկնվում են, օրինակ.

Նորահայտ

- 1) «Քո ազատութեան գինը պէտք չէ մեզ»:
- 2) «Ծերր ուղկանով միշտ ձուկն էր
որսում»:
- 3) «Ծերր ոչչունեց. պատասխանն այս էր»...
և այլն:

Դավթյան

- 1) «Քո ազատութեան գինը պէտք չէ մեզ»:
- 2) «Ծերր ուղկանով միշտ ձուկն էր
բռնում»:
- 3) «Ծերր ոչչունեց. պատասխանն այս էր» ..
և այլն:

Սրանք ոչ պատահականությամբ և ոչ էլ թարգմանվող նյութի նույնությամբ չեն կարող բացատրվել: Այստեղ գործ ունենք անմիջական ծանոթության և փոխառության երևույթի հետ:

Համեմատելով Դավթյան-Աղայան օրինակները, դարձյալ հանդիպում ենք նույն երևույթին.

Դավթյան

Ուռկանն ըրից միայն տիղմ հանեց.
 Ըստ երկրորդ անգամ ուռկան ձգեց ծով,
 Դուրս եկավ ուռկանն ծովային խոտով.
 Իսկ երրորդ անգամ, երբ ուռկան ձգեց,
 Ընկ ոսկի ձկնիկ նա ծովից հանեց:
 Մեկի ձկնիկը խնդրեց սկսեց,
 Ընտրողային լեզուով ծերին աղաչեց...
 «Ինչ սիրտդ ուզի, երբ որ կամենաս,
 Քանկագին գրաւ ինձնից կստանաս...
 Գնա բեզ համար դու այդ կապոյտ ծով
 Եւ այնտեղ աստու լողա ապահով:

Դավթյան

Ողորմիր ինձի, թաղուհի ձկնիկ,
 Նախատում է ինձ իմ պառաւ կնիկ,
 Ինձ, խեղճ ծերունուս հանդիստ չի թողնում...
 Ընտրող կոտրած է, էլ չէ պետքական...
 Ընտրող կանչել ոսկի ձկնիկին...
 Ընտրողը ծերուկ, յարձիթ խնդրեցիր,
 Ընչ շնչին բանը մեծ բաղդ կարծեցիր...
 Ընկ բան շարաթ հազիւ անցկացաւ,
 Պառաւ տիկինը կրկին կատղեցաւ...
 Ընտրող դու կերթաս, ասում է մարդին...
 Ընտրողում մնալ ազատ թաղուհի,
 Ընտրում եմ դառնալ ծովի տիրուհի,
 Ընկինան ծովերում ուզում եմ ապրել,
 Ընկի ձկնիկին ինձ ծառայ բռնել...
 Ընող այդ բեզ լինի նոր դաս ե խրատ,
 Ընր շանդղենս ցանել կտաւատ... և այլն:

Ընտրում

Ընտրում անգամ միայն տիղմ հանեց.
 Ընտրող անգամը ցանցը ձգեց ծով,
 Ընտրող դուրս եկավ ծովային խոտով.
 Ընտրող անգամ որ ցանցը ձգեց,—
 Ընտրող կարե աւել, թե ինչ դուրս հանեց...
 Ընտրող ոսկի ձկնիկ, ինչպես էր խնդրում,
 Ընտրողային լեզուով ծերին աղաչում...
 Ընչ սիրտդ ուզի, ինչ որ կամենաս,
 Ընտրողն եմ ասում, ինչնից կստանաս...
 Ընտրող ամար դու ծիրանի ծով,
 Ընտրող այնտեղ ապրիր ազատ, ապահով...

Ընտրում

Ընտրում ինձի, թաղուհի ձկնիկ,
 Ընտրող նախատում է իմ պառաւ կնիկ,
 Ընտրողում չի թողնում խեղճ ալորիս...
 Ընտրող կոտրած է, էլ չէ պետքական...
 Ընտրող կանչել ոսկի ձկնիկին...
 Ընտրողը ծերուկ, տնակ ուզեցիր,
 Ընտրող բո մեջ մեծ բան կարծեցիր...
 Ընտրող-երկու շարաթ հազիւ անց կացավ,
 Ընտրող խանութը նորից կատղեցավ.
 Ընտրող կանես, կերթաս, ասում է մարդին,
 Ընտրողում չեմ ուզում մնալ թաղուհի,
 Ընտրում եմ լինել ծովի տիրուհի,
 Ընտրում եմ Ընկինան ծովումը կենալ,
 Ընտրող ձկնիկին ծառայ ունենալ...
 Ընող այդ բեզ համար լինի լաւ խրատ,
 Ընր էլ շրջանես մանդր կտավհատ... և այլն:

Ընտրող ևս ոչ մի կապ չի կարելի բացատրել այս համընկնումները, բացի փոխառությունից:

Համեմատելով Քաթիպայի թարգմանությունը այդ օրինակների հետ, նկատում ենք միայն որոշ համընկնումներ Դավթյանի թարգմանության հետ.

Դավթյան

Նրանից դոնե նոր տաշտ խնդրէիր,
 Ընտրող կոտրած է.—միթէ չգիտէիր:
 Ընտրող մի վշտանաւ, ասաց ձկնիկը,
 Ընտրող կունենալ նոր տաշտ քո կնիկը:
 Ընտրող այդպես մնալ շուգ մէկ վայրկեան:
 Ընտրող հրամայում եմ զնալ գեպի ծով
 Ընտրող կր դիմադրես՝ կերթաս ծեծվելով և այլն:

Քաթիպա

Ընտրող լըվացքի մէկ տաշտ խնդրէիր,
 Ընտրող կոտրած է.—այդ խօ դիտէիր:
 Ընտրող տրամիլ, ասաց նորան ձկնիկը,
 Ընտրող տաշտ կունենալ այսօր քո կնիկը:
 Ընտրող գեղընկ մրնալ շուգեմ մէկ վայրկեան:
 Ընտրող, շուտ արա, շուտ, զնա դեպի ծով,
 Ընտրող կամաւ շերթաս՝ կր տանին ծեծով...

Ընտրող բոլոր օրինակներից պարզ երևում է, որ միայն Կ. Տ. Դավթյանի թարգմանությունն է, որ փոխառական անժխտելի աղբրներով կապված է մյուս թարգմանությունների հետ (բացառությամբ 1-ին և 2-րդ թարգմանությունների): Ընտրող կամ մյուս բոլոր թարգմանիչներն են օգտվել Կ. Տ. Դավթյանից, կամ Կ. Տ. Դավթյանն է օգտվել նրանցից:

Ընտրող համոզված կարող ենք պնդել, որ ինքը Կ. Տ. Դավթյանն է օգտվել մյուս հեղինակներից և ահա թե ինչու.

ա Վերևում տեսանք, որ նորահայտ թարգմանությունն ավելի հին է, քան Կ. Տ. Դավթյանինը: Պարզ է, որ նորահայտի հեղինակը չէր կարող օգտվել դեռևս չկատարված մի թարգմանությունից:

բ) Այն օրինակները, որ ցույց տվինք, մեզմասած փոխառական էին, սակայն եթե ընդունված տերմինով ասենք, դա գրադոլություն է: Արդ, հարց է առաջանում, տվյալ դեպքում գրագողներ էին հոշակավոր գրողներ Աղայանը, Պատկանյանը և նորահայտ թարգմանության անհայտ հեղինակը, թե՛ ոմն Դավթյան: Առանց կասկածի մենք պիտի հայտարարենք, որ եթե այդտեղ կա մեկը, որ օգտվել է մի ուրիշից՝ դա ինքը Դավթյանն է, որ օգտվել է ոչ թե մեկից, այլ մի խումբ հեղինակներից:

գ) Եթե վորձենք ընդունել, որ Դավթյանից են աղվել Աղայանն ու Պատկանյանը, ապա պիտի այդ դեպքում Դավթյանը իրոք մի օրինակելի տաղանդ չիներ (մի բան, որ չեն ապացուցում ոչ իր թողած մի քանի բանաստեղծությունները, ոչ էլ իր մոռացված անունը — որպես բանաստեղծի) և նրա դործն էլ՝ 1884 թվից առաջ տպագրված, մինչ իրականում այդպես չի եղել: Մյուս կողմից էլ այդպիսի տաղանդավոր թարգմանությունը անտիպ չէր կարող մնալ մինչև 1903 թիվը:

դ) Բավական է միայն հենվել Պատկանյանի «Էլ ղեղջուկ մնալ շուգիմ մեկ վայրկյան» տողի վրա, համոզվելու համար, որ Դավթյանի «Բայց այդպես մնալ շուղե մեկ վայրկյան» տողը իր երկրորդ մասով և հատկապես «շուղե» ձևով գալիս է Պատկանյանից:

Այս բոլորից հետո գալիս ենք հետևյալ հզրակացությանը: Հավատում ենք այն ծանոթությանը, որի համաձայն Կ. Տ. Դավթյանը 1878 թվին թարգմանել է Պուշկինի «Ոսկե ձկնիկը», սակայն ոչ թե նա է առաջին անգամ թարգմանել, այլ Հ. Բաղդասարյանը, ապա Աղեքսանդրյանը, ապա՝ մի անհայտ հեղինակ և նոր միայն ինքը: Դեռ ավելին, Կ. Տ. Դավթյանը ձեռքի տակ է ունեցել նորահայտ թարգմանության մի օրինակը և մեծապես օգտվել նրանից. հետո, երբ լույս են տեսել Աղայանի և Պատկանյանի թարգմանությունները, նա իր թարգմանությունը նորից է վերամշակել՝ բոտ այս նոր թարգմանությունների, օգտվելով հատկապես Աղայանից և այդ բոլորի արդյունքը հրատարակել 1903 թվին:

Հարց է առաջանում, արդյոք այս նորահայտ թարգմանության հեղինակն էլ ինքը Կ. Տ. Դավթյանը չէ՞, այլ կերպ ասած այդ օրինակը հենց այն «առաջին» թարգմանությունը չէ՞, որ նա կատարել է 1878 թվին և ապա վերամշակելով տպել: Այս հարցը մեզ կարող էր հավանական թվալ, եթե չլուսնգարեին հետևյալ մոմենտները:

Առաջին. — Վերևում տեսանք, որ նորահայտ թարգմանության հեղինակը ոչ միայն ծանոթ է եղել առաջին (Հ. Բաղդասարյանի) թարգմանությանը, այլև որոշ տողեր և բառեր վերցրել է նրանից: Արդ, եթե այդ հեղինակը լիներ ինքը, Կ. Տ. Դավթյանը, ապա նա պիտի իր բանաստեղծությունների պրքում թույլ շտաբ այն սխալ ծանոթությունը, որի համաձայն իբր թե ինքն է առաջին թարգմանիչը:

Երկրորդ. — Ցույց տվինք, որ նորահայտ թարգմանությունը որոշ աղերսունի 1-ին թարգմանության հետ նման աղերս չենք գտնում Կ. Տ. Դավթյանի և առաջին կամ երկրորդ թարգմանությունների միջև: Ելնելով Կ. Տ. Դավթյա-

նի վերամշակելու և այլոց նյութերն օգտագործելու սովորությունից, կարծում ենք որ նա պիտի օգտվեր նաև նախորդներից: Դրա բացակայությունը թույլ է տալիս հավատալու, որ նա ծանոթ չի եղել դրանց. սույնի մյուս ապացույցն էլ նրա թարգմանությանը կցված ծանոթությունն է: Ուստի և կարելի է կարծել, որ նորահայտ թարգմանության հեղինակն այլ անձնավորություն է:

Ծրուրդի.— Եթե նորահայտ թարգմանությունը Կ. Տ. Գավթյանինն էր, ապա նա հրատարակելուց առաջ չպիտի իր թարգմանությունը ծանրաբեռներ գրապոլիտիկայի և նոր միայն հրատարակեր, նամանավանդ, որ Աղայանը դեռ կենդանի էր: Հենց այս հանգամանքը խոսում է Կ. Տ. Գավթյանի անբարեխղճության մասին: Իսկ եթե նա անբարեխիղճ էր կենդանի հեղինակի նկատմամբ, ապա առավել ևս այդպիսին կլիներ, թերևս վաղուց մահացած մեկ ուրիշի նկատմամբ:

Եթե անգամ ապացուցվի, որ այդ նորահայտ թարգմանության հեղինակն էլ Կ. Տ. Գավթյանն է, դարձյալ դա ոչնչով չի կարող փոխել այն ուշադրությունը, որին արժանի է այդ օրինակը, որպես մի այնպիսի գործի, որի արժանիքները թվարկեցինք վերևում: Այդ դեպքում միայն կարելի է ավստասալ, որ նրա հեղինակը անզգուշություն և շմտածված քայլ է կատարել հետագա վերամշակմամբ, չպիտակցելով իր առաջին թարգմանության իսկական արժեքը:

Ինչ վերաբերում է այն մի քանի տողերին, որոնք նորահայտ օրինակից են անցել Աղայանին («... կտահատ», «... Վզիդ խփելով և այլն»), պիտի ենթադրել, որ կամ Աղայանն էլ է ձեռքի տակ ունեցել նորահայտ օրինակը, կամ տեղյակ է եղել Գավթյանի ձեռագրին (Գավթյանը երկար ժամանակ սպասել է Թիֆլիսում): Այստեղից էլ կրկին հարց է առաջանում, եթե այդպես էր, հապա ինչու է Աղայանը հարց չհարուցեց՝ հրատարակելու մեկը կամ մյուսը: Պատասխանը պարզ է: Այն ժամանակ, երբ Ղ. Աղայանն զբաղվեց այդ թարգմանությամբ, նորահայտ օրինակը նրան բավարարել չէր կարող, սրով հետև ինքը ընդունակ էր տալու ավելի ընտիր և բարձրորակ փոխադրություն, որը և տվեց:

Անփոփոխելի.— Ռուս մեծանուն բանաստեղծ Պուշկինը դեռ իր կենդանության օրերից եղել է հայ ընթերցողների ուշադրության կենտրոնում. նրա մահից հետո ավելի է լայնացել նրա երկերի ազդեցության շրջագիծը մեր իրականության մեջ և մեկը մյուսի ետևից սկսել են հրատարակվել նրա ստեղծագործությունների թարգմանությունները: Այդ թարգմանությունների ընթացքում առանձին պատմություն է ստեղծվել նրա լավագույն հեքիաթներից մեկի—«Ոսկե ձկնիկի» մի շարք թարգմանությունների շնորհիվ: Ընդամենը 26 տարվա ընթացքում այն թարգմանվել է 6 անգամ, որոնցից 5-ը արժանապես են տպագրության: Այդ թարգմանությունները սկսվելով 1858 թվից, անշեղճորեն ձգտել են հնարավոր կատարելիք, որին ի վերջո հասել է հայ տաղանդավոր բանաստեղծ Ղ. Աղայանը, տալով մինչև օրս էլ չգերազանցված և բազմիցս հրատարակված մի փոխադրություն:

Այդ թարգմանությունների պատմության մեջ առանձին ուշադրության արժանի օրինակ է եղել Երրորդ փորձի արդյունքը, որը սակայն մինչև օրս մնացել է անտիպ և մոռացված: